

ՀԱՍՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Զրառատ համայնքի զարգացման ծրագրի
և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի » կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արթուր Ասատրյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 12.դեկտեմբերի 2016թ.թիվ 35-Ն որոշմամբ

Գ.ՋՐԱՌԱՏ
2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .
4. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶՀԾ- ՍՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 2017-2021թթ. Ջարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա տարիների համար հանդիսանալու է Ջրառատ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Ջրառատ համայնքի ավագանու 2016թվականի հուլիսի 15-ի N 26-Ա որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Ջրառատ համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման

խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Ջրառատ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ,: ՀԶԾ-ն ներառում է նաև Ջրառատ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Ջրառատ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ջրառատի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ջրառատ համայնքը կազմավորվել է 1975թվականին՝ խորհրդային տարիների ժամանակ նախկին Ջրառատի կաթնային համալիրի բանվորական ավանի հիմքի վրա: Բնակչությունը հավաքվել է ՀՀ տարբեր շրջաններից, ինչպես նաև Ադրբեջանից գաղթած հայերից: Համայնքի կազմի մեջ մտնող բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Ջրառատ համայնքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1745մ բարձրության վրա, գյուղը սահմանակից է Գեղարքունիքի մարզի Դդմաշեն և Զովաբեր գյուղերի վարչական տարածքներին: Հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան համայնքից 8 կմ է, մայրաքաղաք Երևանից՝ 45 կմ: Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Ձմեռը ցուրտ է, բքաշունչ: Ամառը զով է, երբեմն էլ շոգ ու երաշտ: Տարածքում բնական աղբյուր և գետ չկա: Առաջնահերթ հիմնախնդիրը աշխատատեղերի պակասն է, որն էլ բերում է բնակչության արտագաղթի: Գյուղի բնակիչները զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղի

բնակիչները իրենց մասնակցությունն են ունեցել Արցախյան ազատամարտին: Ջրառատ համայնքի վարչական տարածքը կազմում է 42,39 հա., որից գյուղատնտեսական շանակություն ունեն 0,51հա.-ը, բնակավայրերը զբաղեցնում են 16,03 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 25,80հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 0,04 հա., պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 1,44 հա:

Ջրառատ համայնքի բնակչությունը 2016 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 602 մարդ (աղյուսակ1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	602
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	132
2.1	Այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վազոն, տնակ/ բնակվող	-
2.2	Կիսակառույց տներում բնակվող	-
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	33

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 456մարդ, այդ թվում տղամարդիկ 215 և կանայք 241 : Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2 Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝			
	մինչև 1 տարեկան	8	5	3
	1-2 տարեկան	15	6	9
	3-4 տարեկան	10	5	5
	5-6 տարեկան	9	4	5
	7-10 տարեկան	28	14	14
	11-14 տարեկան	25	14	11

	15-17 տարեկան	8	5	3
	18 և ավելի տարեկան	341	181	160
2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝	48	18	30
	Տարիքային և աշխատանքային	40	16	24
3.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	1	-	1
4.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	-	-	-
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-	-	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	1	-	1
9.	Հաշմանդամներ	8	2	6
10.	Զբաղվածներ	200		
11.	Գործազուրկներ	100		
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	33		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	1		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

Համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ավագանին 5 անդամով, համայնքի աշխատակազմը բաղկացած 5 աշխատակցից: Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 15-ի թիվ ---Ա որոշմամբ:

Համայնքապետարանում և կենտրոնական հատվածում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքապետարանը ունի վարչական շենք, որը գտնվում է գյուղի սկզբնամասում: Շենքի ընդհանուր վիճակը բավարար է, որը կարիք ունի ընթացիկ վերանորոգման և գույքի նորացման:

Ջրառատ համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության կողմից

Հավելված 1

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ

ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

ԳՅՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՐՀ

ԲԱՐՁՐ ԵՎ ՑԱԾՐ ԼԱՐՄԱՆ ԳԾԵՐ

Տնտեսական անկման հետևանքով գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Գյուղի ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ջրառատ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 29-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է 1178.7 հազար դրամ, ծախսերի գծով՝ **1178.7** հազար դրամ: Ջրառատ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի թիվ 3-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով կազմել է 1178.7 հազար դրամ, ծախսերի գծով՝ **1178.7** հազար դրամ:

Համայնքը նախկինում եղել է գյուղատնտեսական զարգացած կենտրոն, հատկապես զարգացած է եղել անասնապահությունը / Ջրառատի կաթնային համալիրը եղել է բնակչության հիմնական աշխատավայրը /: Անասնապահությամբ բնագավառում մեծ դժվարություններ են առաջանում, քանի որ հողերը խիստ սահմանափակ են, շատ քիչ են բնական արոտները, խոտհարքեր չկան: Խոտի և խտացրած կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը: Անասնապահության զարգացման համար հեռանկար չկա: Համայնքի բնակչությունը այժմ էլ զբաղվում է անասնապահությամբ, սակայն ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են, հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Համայնքի սեփականաշնորհված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր /ցորեն, գարի և այլն/, կարտոֆիլ: Տնամերձ հողերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությամբ զբաղվելն ու առևտուրն է: Բնակիչների մի մասը զբաղվում է մեղվաբուծությամբ, սակայն տարիների կտրվածքով մեղվի համար եղանակային պայմանները լավ են լինում մեկընդմեջ: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է:

Հավելված 2-ում ներկայացված է համայնքում առկա անասնազվաքանակի վերաբերյալ տվյալներն:

Հավելված 2

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ

Հ/Հ	Ցուցանիշները	01.10.2016 թ. դրությամբ
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝	220
	Կովեր	90
2.	Խոզերի գլխաքանակը	25
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	340
4.	Զիւրի գլխաքանակը	5
5.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	400
6.	Մեղվարնտանիքների քանակը	65

Համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի 2 խանութներ: Համայնքում չկա գործող ոչ կառավարական կազմակերպություններ /ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն/:

Աղյուսակ 3

Ջրառատ համայնքի առևտրային ծառայություններ մատուցող կազմակերպություններ առ 01.12.2016թ դրությամբ

Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ
«Մանիկ Ալեքսանյան» Ա/Ձ «Գրիգոր Գրիգորյան» Ա/Ձ	սննդի և տնտեսական ապրանքների խանութներ սննդի և տնտեսական ապրանքների խանութներ

Համայնքում գործում է միջնակարգ կրթության մեկ հաստատություն՝ միջնակարգ դպրոց՝ «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

Ջրառատի միջնակարգ դպրոցը հիմնանաորգման կարիք ունի: Դպրոցը շենքը գտնվում է ոչ բարվոք վիճակում, ջեռուցման համակարգ չկա.: Դասասենյակները տաքացվում են վառելափայտի միջոցով: Դպրոցը զուրկ է սանիտարահիգիենիկ նվազագույն պայմաններից:

Համայնքում առկա է նախադպրոցական կրթության մեկ հաստատություն՝ մանկապարտեզ, որը չի գործում: Մանկապարտեզի շենքը վերանորոգման կարիք ունի, ապահովված է անհրաժեշտ գույքով:

Աղյուսակ 4-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատությունում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 4. Ջրառատ համայնքի հանրակրթական դպրոցի վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	17	70
2.	Ջրառատ համայնքի մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	-	-

Համայնքի տարածքում ակումբ, գրադարան, սպորտդահլիճ առկա են միայն դպրոցում: Գյուղը զրկված է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից: Համայնքն ունի ֆուդբոլի դաշտ, որտեղ երիտասարդները կազմակերպում են ֆուդբոլային խաղեր: Սպորտը առավել զարգացնելու համար համայնքին անհրաժեշտ է ունենալ մեծ սպորտային կոմպլեքս: Այս բնագավառում անելիքներ շատ կան: Միայն համայնքի ուժերով ոչինչ չի լինի անել:

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ:

Ջրառատ համայնքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Ջրառատ համայնքում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է համայնքապետարանի շենքում ոչ բարվոք վիճակում: Բուժ. կետն ունի մեկ աշխատող, որը տեղի բնակիչ է և ֆինանսավորվում է ոչ համայնքապետարանի միջոցների հաշվին: Ջրառատ համայնքի բնակիչները առաջին օգնությունը ստանում են այնտեղ, այնուհետև օգտվում են «Հրագդանի քաղաքային պեղիկլինիկա» ՓԲԸ-ի բժշկան օգնության ծառայություններից, որի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման համակարգով, ունի արդիական բժշկական սարքեր:

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիրն է համայնքի սանմաքրումը: Համայնքում չի կազմակերպվում աղբահանություն: Համայնքը չունի աղբի կենտրոնացված աղբավայր: Աղբահանությունը կատարվում է տնային տնտեսությունների կողմից անհատական կերպով, որի հետևանքով աղտոտվում է շրջակա միջավայրը:

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառնություն: Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան: Ջրառատ համայնքի քաղաքապետության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղաքապետության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչությունը աշխատանք է փնտրում հիմնականում Երևան քաղաքում, դպրոցում, քիչ թվով գործող աշխատատեղեր ապահովվող խանութներում, Հրազդան և Ծաղկաձոր քաղաքների հանրային սնունդ սպասարկող հիմնականում սեզոնային օբյեկտներում աշխատատեղերում աշխատելու հնարավորությունը: Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Այս ծառայությունը գտնվում է Հրազդան քաղաքում, որը համայնքից հեռու է մոտ 8 կմ, որը բնակիչների համար դժվարություններ է ստեղծվում այնտեղ հասնելու համար:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Ջրառատ համայնքի տարածքում մասնավոր ներդրումների հաշվին իրականացվող ծրագրեր չկա:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 81.3%, 2017թ.՝ 74.1%, 2018թ.՝ 75.7%, 2019թ.՝ 74.4%, 2020թ.՝ 76.5%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 5. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	12666.9	9343.1	11745.6	12245.6	12745.6	14045.6	14045.6
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	11450.60 5	934.3.19					
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	959.705	934.99	1042	1042	1042	1042	

1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից							
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար							
	Հողի հարկ	307.449	220.443	310.0	310.0	310.0	310.0	310.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից							
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	620.256	681.856	400.0	400.0	400.0	700.0	700.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ							
	Տեղական տուրքեր	32.0	32.0	32.0	32.0	32.0	32.0	32.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր	32.0	32.0	32.0	32.0	32.0	32.0	32.0
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	10485.0	8406.0	11000.0	11500.0	12000.0	13000.0	13000.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	10485.0	8406.0	11000.0	11500.0	12000.0	13000.0	13000.0
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	10485.0	8406.0	11000.0	11500.0	11200.0	13000.0	13000.0

բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	5.5	2.0	3.6	3.6	3.6	3.6	3.6
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	5.5	2.0	3.6	3.6	3.6	3.6	3.6
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	5.5	2.0	3.6	3.6	3.6	3.6	3.6
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							

	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							

	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԻ (ԴԵՖԻՑԻՏ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)							
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)							
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխառվություններ							

	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ							
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	1216.29						
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							

2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում	1216.29	1327.389						
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը	552.449	51.653						
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐ								
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ								
1.1	Արժեթղթեր								
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	-հիմնական գումարի մարում								
1.2	Վարկեր								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	Փոխատվություններ								
	-փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդայի նբյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ 6. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամտների և ծախսերի կանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. տարեկանայլան	2017թ. կանխ.	2015թ փաստ. նկատ %	2018թ. կանխ.	2015թ փաստ. նկատ %	2019թ. կանխ.	2015թ փաստ. նկատ %	2020թ. կանխ.	2015թ փաստ. նկատ %	2021թ. կանխ.	2015թ փաստ. նկատ %
Ընդամենը եկամուտներ	11061.3	11745.6	108.9	12245.6	108.9	12745.6	113.4	14045.6	117.9	14045.6	127
Հարկային եկամուտներ, որից	568.0			1042.0		1042.0		1042.0		1042.0	
Հողի հարկ	286.0	310.0	108.4	310.0	108.4	310.0	108.4	310.0	108.4	310.0	108.4
Գույքահարկ	250.0	400.0	160	400.0	160	400.0	1600	700	280	700	280
Տեղական տուրքեր	32.0	32.0	100	32.0	100	32.0	100	32.0	100	32.0	100
Պաշտոնականը նթացիկ դրամաշն.	10486.1	11000	104.9	11500	109.7	12000.	114.4	13000	123.4	13000	123.9

Այլեկամուտներ	7.2	3.6	50	3.6	50	3.6	50	3.6	50	3.6	50
Ոչֆինանսական ակտիվների իրա- ցումից մուտքեր											
Տարեսկզբի ազա- տման ցուցիչ											
Ընդամենը	11061.3	11745.6	108. 89	11		12245.6		13045.6		14045.6	
Ընդամենը ծախս- եր											
Ընթացիկ ծախսե- ր, այդ թվում											
Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	8523.0	9800.0	115	10000	117.3 3	10310.3	120.97	11000.0	129.1	11500.0	134.92
Ապրանքն. գնման նման. վճ. ծախս	1977.3	2000	101.1	1600.0	80.9 2	2000.0	101.15	2000.0	101.15	2000	101.15
Սուբսիդիաներ											
Դրամա- շնորհներ											
Սոցիալական նպ- աստներ											
Այլ ծախսեր	561.0	245	43.6 7	445.6	79.4 3	235.3	41.94	45.0	8	545.6	97.25
Ոչֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում											
Հիմնական միջոց- ներ											

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը,
3. համայնքի սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքների, վարչական շենքի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը,

4. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, նպաստում սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացմանը,
5. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով,

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

Ոռոգման ջրի ներհամայնքային համակարգերի լավ վիճակը,

Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,

Համայնքը մարզկենտրոնին մոտ գտնվելը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

Հողային տարածքների բացակայությունը

Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը,

Սոցիալապես անապահով բնակչության բարձր տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը,

Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը /հիմնական նպատակը աշխատեղերի ստեղծում/

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

Գործազրկության մակարդակի աճը,

Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ջրառատի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական զարգացումը:

Գալիք 2017-2021թթ ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

Հրազդան քաղաքի հետ, որը համարվում է տարածաշրջանային կենտրոն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովվում համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների:

Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է օրինակ պարարտանյութերի, սեմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:

Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:

Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	10%	19%	18%	17%	16%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	9.5%	-19.6%	-2.2%	-2%	-1.3%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1.5%	1.7%	2%	2.5%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

1. Նախադպրոցական շենքի տանիքի ընթացիկ վերանորոգում
2. Համայնքի գլխավոր հատակագծի կազմում
3. Խմելու ջրագծերի կառուցում
4. Համայնքի փողոցների լուսավորում
5. Վարչական շենքի վերանորոգում և կահավորում անհրաժեշտ գույքով և սարքավորումներով

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ր 1

« Համայնքի գլխավոր հատակագծի կազմում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հատկացնել գլխավոր հատակագծի ձեռք բերման աշխատանքների իրականացման համար:						
Ծրագրի անմիջական նպատակ <i>Համայնքի քաղաքաշինության բնագավառի և համայնքի տարածական զարգացման ապահովում</i>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (բաժիններ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Առավել արդյունավետ աշխատանքների կատարում քաղաքաշինության բնագավառում:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Աշխատանքների կատարման ավարտ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի հետագա տարածական զարգացման, քաղաքաշինության պլանավորման, հողերի արդյունավետ օգտագործման ապահովում						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2
« Համայնքի փողոցների լուսավորում»

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման համար:						
Օրագրի անմիջական նպատակ <i>Ունենալ արտաքին լուսավորությունով ապահոված, անվտանգ և մաքուր փողոցներ</i>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Օրագրի միջանկյալ արդյունքներ Ապահովել բնակչությանը անվտանգ և լուսավոր փողոցներով	1. <i>Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը</i>						
	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ (մարդ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	200	320	400	500	600
	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ (%)				
		2016	2017	2018	2019	2020	2021
Օրագրի հիմնական գործողությունները	1. Մրցույթի հայտարարություն 2. Պայմանագրի կնքում 3. Աշխատանքների կատարում						
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1000.0 հազար դրամ						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Օրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Օրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Օրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Օրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բոլոր բնակելի թաղամասերում փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման ավարտ						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ր 3

« Խմելու ջրի ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	, միջոցներ հայթհայթել խմելու ջրի ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման համար:						
Ծրագրի անմիջական նպատակ <i>Համայնքի ջրագծերի վերանորոգման</i>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքի բնակչությանը հատկապես ամռանը շուրջօրյա ջրամատակարարման ապահովումն է:	Հին խողովակների փոխարինում						
	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1500	0	0	0	0
	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ (ընտանիք				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0					
Ծրագրի հիմնական գործողությունները	- Պայմանագրի կնքում - Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 3000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել::						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4

« Կարչական շենքի վերանորոգում և կահավորում անհրաժեշտ գույքով »

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	համայնքում ժողովներիի դահլիճը վերանորոգելու և կահավորելուը համար						
Օրագրի անմիջական նպատակ <i>Ջրառատ համայնքի թափանցիկ կառավարման կարողությունների բարելավում</i>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Օրագրի միջանկյալ արդյունքներ Կբարձրանա համայնքի կենսամակարդակը, աշխատատեղերի ստեղծում, գյուղատնտեսության զարգացում	1. Համայնքային բոլոր հանդիպումները կլինեն թափանցիկ ու օնլայն հեռարձակմամբ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (քանակը)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	6	8	10	13	15
	2. Տարբեր դասընթացների կազմակերպում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հոդատերեր)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	6	10	13	15
Օրագրի հիմնական գործողությունները	1. <i>Համայնքի կողմից ներդրում</i> 2. <i>Պայմանագրի կնքում</i> 3. <i>Աշխատանքների կատարում</i>						
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1200. հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1200.0 հազար դրամ						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Օրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Օրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Օրագրի սկիզբ և ավարտ	2018-2020թթ.						
Օրագրի համառոտ նկարագրություն	Ջրառատ համայնքի բնակչության 51 տոկոսը կանայք են, իսկ 49-ը տղամարդիկ: Սա ցույց է տալիս թե ինչքան կարևոր է կանանց ներգրավումը համայնքի զարգացման մեջ: Մեր ծրագրի շրջանակներում իրականացվելիք կետերից մեկը կանանց ավելի մեծ մասնակցություն է համայնքի կառավարման ու որոշումների ընդունման մեջ, սա ոչ միայն տեղական կամ ազգային նպատակ է,						

	այլև ՄԱԿ-ի կայուն զարգացման ծրագրի 2017-2030 թվականների նպատակներից մեկը: Ներկայումս Ջրառատի համայնքապետարանը պլանավորում է կառուցել ժողովների դահլիճ, որտեղ կիրականացվեն կանոնավոր ու հաճախակի հանդիպումներ, քննարկումներ մեր համայնքի անդամների հետ, տարբեր սոցիալական խմբերի հետ:.
--	---

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5

«Նախադպրոցական շենքի տանիքի ընթացիկ վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել և կատարել համայնքի բյուջեից համաֆինանսավորում շենքի վերանորոգման համար						
Ծրագրի անմիջական նպատակ <i>Ունենալ վերանորոգված, կահավորված նախադպրոցական հաստատություն, որտեղ կհաճախեն համայնքի ողջ երեխաները, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում և համայնքային գույքի պահպանում</i>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հզորություն)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0 խումբ	0 խումբ	0 խումբ	2խումբ	3 խումբ	4 խումբ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ <i>Համայնքի երեխաների հաճախում գեղեցիկ, հարամարվետ վերանորոգված և կահավորված մանկապարտեզ, և շուրջ 15 աշխատատեղերի ստեղծում</i>	Ցուցանիշներ	1. <i>Լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում</i>					
		Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ (աշխատատեղեր)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	10	12	15
	Ցուցանիշներ	2. <i>Երեխաների թվի աճ</i>					
		Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ (երեխաներ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	1	2	2	
Ծրագրի հիմնական գործողությունները	2. Մրցույթի հայտարարում 3. Պայմանագրի կնքում և համայնքի կողմից համաֆինանսավորում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` 0.0 դրամ Կապիտալ ծախսեր` 1500 հազար դրամ Ընդհանուր բյուջեն` 1500. հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							

Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքն ունի մեկ նախադպրոցական հաստատություն, Մանկապարտեզի շենքը ենթակա է կապիտալ վերանորոգման: Ներկայումս համայնքի երեխաների մի մասը հաճախում է Հրազդան քաղաքի մանկապարտեզ, ուստի վերանորոգման արդյունքում մանկապարտեզը կաշխատի, ինչպես նաև կստեղծվեն մոտ 15աշխատատեղ համայնքի երիտասարդ կադրերի համար:

4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Ջրառատ համայնքի ՀԶԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Ջրառատ համայնք)
(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջետա- վորված	Ծրագրի կատարումն ըստ տարիների	Ֆինանսավորման աղբյուրներ	Ծախսերի դասեր	Ֆինանսավորման կարգավիճակ
-------------------	---------------------	-------------------------------------	-----------------------------	------------------	-----------------------------

	միջոցներ	2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հայտ	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
1 Համայնքի գլխավոր հատակագծի կազմում.	1000	5 0 0	5 0 0															
2.Համայնքի փողոցների լուսավորում	1000	2 0 0	2 0 0	2 0 0	2 0 0	2 0 0												
3. Խմելու ջրի ցանցի հիմնանորոգում և ու վերակառուցում	3000	3 0 0 0	3 0 0 0									30 00						
4.Վարչական շենքի վերանորոգում և կահավորում անհրաժեշտ գույքով	1200		6 0 0	6 0 0								12 00						
5 Նախադպրոցական շենքի ընթացիկ վերանորոգում	1500			5 0 0	5 0 0	5 0 0						15 00						

5. ՀԶԾ-Ի ՍՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ :

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 8-ում ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը :

Աղյուսակ 8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔ

(__2017-2011թթ__ թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Կիսամյակա յին	Տարեկան	Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Կիսամյակա յին	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվողընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտվածտոկոսով)																		X	Մարզպետարաններ (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Զերմուկ համայնքների համար՝ համայնքապետարաններ)	Փաստաթղթային և ուսումնասիրություն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ ,արտահայտված տոկոսով																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության																		X	ՀՀ Ոստիկանություն	Հարցում

փոփոխությունը բնականաճի պատճառով																			
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																			
1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտ ասարդության ներգրավմամբ																			
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը																			
2.1Համայնքում գլխավոր հատակագծին համա- պատասխան տրված շինարարական թույլտ- վությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկո- սով																		Համայնքա- պետարան	Փաստա- թղթային ուսումնա- սիրություն
2.2. Համայնքի փողոցների լուսավորում																	X	Համայնքա- պետարան	Փաստա- թղթային ուսումնա- սիրություն
2.3. Խմելու ջրի ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում																	X	Համայնքա- պետարան	Փաստա- թղթային ուսումնա- սիրություն
3.Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող բնակելի																			

տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը																				
3.4 Վարչական շենքի վերանորոգում և կահավորում անհրաժեշտ գույքով																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
3.5 Նախադպրոցական շենքի տանիքի կապիտալ վերանորոգում																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում:

Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իրն (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: